ԱՆԻԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 1000-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԱԺՈՂՈՎ ՆՅՈՒ ՅՈՐՔՈՒՄ

Նյու Յորքի Հիսթորիքըլ Սըսայլըթիի դահլիճում 1989 թ. հոկտեմբերի 21-ին տեղի ունեցավ միջազգային առաջին համաժողովը՝ նպատակ ունենալով, ըստ արժանվույն տոնել Անիի Մայր տաճարի հիմնադրման 1000-ամյակը (989—1989)։ Գիտական համագումարը կազմակերպեց էր ԱՄՆ-ի Հայկական առաքելական եկեղեցու առաջնորդարանը՝ Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի ու տոնակատարության առիթով ստեղծված Կենտրոնական հանձնաժողովի նախաձեռնությամբ։

Ինչպես ասաց Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանը, «Անիի Մայր տաճարի կառուցման հազարամյակի տոնակատարությանը նախաձեռնակ եղած էինք անցյալ տարի, Հայաստանի գեկտ. 7-ի երկրաշարժից ամիսներ առաջ։ Ահավոր այդ աղետը ցնցեց Անին ես, դշմեցուց բոլորս, ե, շատ բնական կերպով, մեր բոլորին ուշադրությունը կենտրոնացավ երկրաշարժից ազետյալներու օգնության սրբազան գործի վրա։ 1989 հունվարին էր միայն, որ քար դնելով մեր սրտի վրա, վերստին ժողովի հրավիրեցինք հանձնախումբը։ Խորհրդակցության ընթացքին կամաց-կամաց բյուրեղացավ հայությունը խորհրդանշող ոգին՝ ոտքի կանգնել, արհամարհել մահն, ու քաջությամբ նայել ապագային։ Եվ մանավանդ,—շարունակում է Աշճյանը,—ամեն մարդ անդրադարձավ այն խնդրին, որ Անիի հազարամյակը շնչել, ոչ միայն անպատշաճ էր, այլ անհարիր Անին կառուցողների ոգուն և հիշատակին։ Կորովաշունչ նման ոգով էլ կազմակերպվեց և իրագործվեց գիտական համագումարը Նյու Յորքում»։

Բազրատունյաց շրջանի Հայաստանի մայրաքաղաք Անիի պատմաարվեստագիտական հարցերի բազմությունը պահանջում է թեկուզեմասնակի պարզաբանում։ Անիի ճարտարապետաքաղաքաշինական իրողությունը մինչ օրս թերևս չի արժեքավորված այն աստիճանի, որ մաս դառնա հետաբաքական «քաղաքների վերածնության» ընդհանուր պատմության։ Նման նկատառումներից ելնելով, Նյու Յորքի համաժողովի կազմակերպիչները, նպատակադրված լինելով լուծել արմատական խնդիրներից մի քանիսը, համագումարին էին հրավիրել հայ և օտար մասնագետներին։ Բացման խոսքով հանդես եկան ատենապետ դր. Հայկազ Գրիգորյանը, Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանը և դոկտոր, պրոֆ. Ա. Ալպսզո-Նովելլոն (Միլան)։

Դասախոսությունները բաժանված էին ըստ թեմաների. Անիի պատմություն, ելույթ ունեցան դոկտոր Յուսի Տեր-Մանվելյանը (ԱՄՆ), հանդես էր գալու նաև Երևանի պետական համալսարանի պրոֆ. Թ. Խ. Հակոբյանը, բայց ցավոք սրտի, հանկարծամահ եղավ։ Նրա ելույթը ընթերցեց դոկտոր Հրանդ Մարգարյանը (ԱՄՆ)։ Հաղորդեցին Ֆրանսիայից ժամանած դոկտոր Պատրիկ Տոնապետյանի, Բոլոնիայի համալսարանի դասախոս, դոկտոր Գաբրիելլա Ուլուհոնյանի ելույթները։ Մշակութային միջավայր ծրագրային բաժնում խոսեց Ա. Ալպագո-Նովելլոն, ապա Նյու Յորքի Կոլումբիայի համալսարանի դասախոս Կ. Էվանսը, որը «Հռոմկլայի և Արևմուտքի առաջնորդարանների մանրանկարները» ուսումնասիրության հեղինակն է։ Վերջում խոսեց դոկտոր Ալիս Թեյլորը (Նյու Յորք)։ Անիի պաշտպանության վերաբերյալ հարցերի շուրջ հանդես եկան՝ Երևանից դոկտոր, ճարտարապետ Արմեն Ջուրյանը, Հռոմից պրոֆ. Պաոլո Կուենոն, որի ջանքերով 1988-ին լույս տեսավ «Հայ ճարտարապետությունը» մեծարժեք աշխատությունը։

Գիտական համագումարի վերջում տեղի ունեցավ մտքերի փոխանակություն։ Նիստի ատենապետն էր Կոլումբիայի համալսարանի դասախոս դոկտոր Նինա Կարսոյանը, իսկ նախագահության անդամ էին Լենինգրադից՝ Ալվիդա Միրզոյանը, Կոլումբիայի համալսարանի հայերեն լեզվի ու գրականության դասախոս, հայ-բյուզանդական աստվածաբանական հարցերի մասնագետ պրոֆ. Պիտեր Քաուն, ԱՄՆ-ի ատոմային էներգիայի հանձնաժողովի նախկին տնօրեն, Նյու Յորքի համալսարանի ատոմային ֆիզիկայի դասախոս Վազգեն Բարսեղյանը և հայկական արվեստի տաղանդավոր դիտակ դոկտոր Պատրիկ Տոնապետյանը, որը ժ. Մ. Թիերրիի հետ հեղինակակից է 1987-ին Փարիզում լույս տեսած ստվարածավալ «Հայկական արվեստը» գրքի։ Փակման խոսքով ելույթ ունեցավ Պ. Կուենոն և արեց հետևյալ առաջարկը. Ախուրյանի երկու ափերի երկայնքով ստեղծել աշխարհագրական չեզոք գոտի,

այդ սահմաններում ներգրավել Անին՝ իր շրջակայքով, հասնելով մինչև Կարսի մոտակայքը, Բագարանը, իսկ մյուս ափին՝ մինչև Երերույք ու Լենինականի շրջակայքը։ Նշված տարածությունը, պատմական շինություններով հանգերձ, հայտարարել միջազգային նշանակության հնագիտական և տուրիստական «հարգանքի գոտի»։ Որպես այդպիսին, ծրագիրը ներկայացնել Խորհրդային Հայաստանի, Խորհրդային Միության և Թուրքիայի Հանրապետության կառավարությունների հաստատմանը։ Այնուհետև հարկ կլինի առաջարկված շկոր գոտին վավերացնել ՅՈՒՆԵՍԿՈ-ի կողմից։

ՅՈՒՆԵՍԿՈ-ի պատվերով, Պ. Կունեոն 1967-ին և 1969-ին եղել է Անիում, առաջադրանք ունենալով տեղում ուսումնասիրել հուշարձանների վիճակը, դրանց վերանորոգման և վերականգնման հնարավորությունները։ Նա իր կազմած տեղեկագրում, որը լույս տեսավ 1970-ին Լուվենի «Մոնումենտում» հանդեսում, գրում է. «Ինչ անել, որպեսզի նման անգնահատելի հարստությունը՝ Անիի պատմական վայրը, պահպանվի ու գնահատվի համաշխարհային մշակույթի ընդհանուր արժեքների շրջանակում։ Դրա համար պետք է վճռել ու գործել»։ Հանգուցյալ Թ. Հակոբյանը, իր «Անիի պատմության» մեջ (Երևան, 1982, գիրք Երկրորդ, էջ 396) գրում է. «Թող ների բարի առաքելությամբ մեր վաղեմի մայրաքաղաքը այցելած իտալացի հեղինակը, եթե նրա առաջարկները առայժմ համարենք միայն բարի ցանկություն»։ Բարեբախտաբար Պ. Կունեոյի ցանկությունը իրագործելու առաջին կարևոր քայլը կատարվեց 20 տարի անց, Նյու Յորքում, Անիի Մայր տաճարի հիմնադրման 1000-ամյակին նվիրված միջազգային առաջին համաժողովում։ Կարևոր մի իրողություն, որը հուսով ենք, պիտի ըստ արժանվույն արձագանքվի նաև Հայաստանում, մանավանդ որ 1988 թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժը վնասել է Անիի պարիսպների մի մասը, եկեղեցիների պատերը, ընդ որում նաև Մայր տաճարինը։

Հայության խոհեմությունը այն է, որ մղելով հիրավի օրինական պայքար ԻԿՈՄՈՍ-ի ընդունած օրենսդրության համաձայն, ձգտում է իր պահանջները համաձայնեցնել համապատասխան մարմինների հետ, որպեսզի պահպանվեն Անին ու Թուրքիայում գտնվող հայկական հուշարձանները։ Այն հանգամանքը, որ այդպիսի պահանջները չեն հակասում միջազգային իրավունքին, բխում է նրանից, որ հուշարձանների պահպանման իմաստով հայերի պայքարը էությամբ արդար է։ Իսկ միջազգային իրավունքը ոչ այլ ինչ է, եթե ոչ փորը ազգերի արխարհագրականորեն առավել ընդարձակ, պատմականորեն ազգային տարածությունների վրա ստեղծված մշակույթը պահպանելու, ազգային հավաքականության գոյատևելու իրավունք։ «Պահպանումը,—ինչպես ասաց պրոֆ. Վ. Բարսեղյանը համագումարում,—լրացուցիչ պայման է, որպեսզի ընդունվի Թուրքիայի առաջարկը. եվրոպական ընդհանուր շուկայի անդամ դառնալ»։

Մեծ եղեռնը հիշատակելու առթիվ, Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն, Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ն և Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ Վ. Համբարձումյանը հրավիրվեցին նախագահելու (1990-ի մայիսի կեսին) Ստրասբուրգում տեղի ունեցած համագումարին։ Ներկայացվեցին օտար և հայ հետազոտողների ուսումնասիրած, Թուրքիայում գտնվող 400 հայկական հուշարձան և Անին։ Դրանցից արված 13000 լուսանկարները ամփոփված են պրոֆ. Վ. Բարսեղյանի կազմած Հայկական հուշարձանների արխիվի հերթական՝ VI հատորում։ Որոշում ընդունվեց, որ գալիք տարվա գիտաժողովին հրավիրվեն նաև ՅՈՒՆԵՍԿՈ-ի և ԻԿՈՄՈՍ-ի ներկայացուցիչները, նաև Թուրք մասնագետներ։ Հիմնական հարցը լինելու է Թուրքիայում գտնվող ճարտարապետական և արվեստի գործերի պահպանումն ու վերականգնումը։ Ա. Ալպագո-Նովելլոյի միջամտությամբ ծրագրված է կատարել Աղթամարի ս. Խաչ եկեղեցու ամրացման աշխատանքներն ու նրա շրջապատի պեղումները։ Այդ աշխատանքներին հայ մասնագետների մասնակցության հարցը առաջ քաշվեց նաև Նյու Յորքում։

Նյու Յորքի համաժողովում հատուկ ուշադրությամբ լսվեց Գ. Ուլուհոճյանի «Անիի եկեղեցիները արձանագրական վկայություններում» դեկուցումը։ Շնորհալի լեգվաբանը քննության առավ X—XIV դդ. Բագրատունյաց մայրաքաղաքի՝ Վերածնության շրջանից մինչև անկումը ձգվող վիմագրությունները։ Նա ցույց տվեց, որ այդ արձանագրությունները Անիի եկեղեցիների պատմության լուսաբանման հարցերում ունեն պատմալեզվաբանական լուրջ արժեք և պարունակում են առավել հարուստ տվյալներ, քան Կիրակոս Գանձակեցու, Մատթեոս Ուռհայեցու և Մխիթար Անեցու հիշատակությունները, որոնք հիմնականում վերաբերում են եկեղեցիների հիմնադրմանը։ Հայատառ վիմագրությունները ճանաչողական կարևոր իմաստն ձեռք բերում, երբ թարգմանվում են օտար լեզուներով, այնպես, ինչպես անում է Գ. Ուլուհոճյանը, դրանք վերածելով ֆրանսերենի և իտալերենի։ Այսպես է լեղվաբանը իրականացնում մեր ժողովրդի առավել ճշտված պատմու-

թյունը օտարներին մատուցելու կարևոր գործը։

Ալիս Թեյլորը կարգաց «Անիի պարիսպները» դեկուցումը։ Նա ընդգծեց, որ Աշոտյան պարիսպներից հետո, Սմբատ Բ-ը կառուցել է Գլիձորից մինչև Իդաձոր ձգվող, աշտարակներով ամրացված կրկնաշարք պարիսպներ։ Դրանց մասին են վկայում պատմիչներ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը, Վարդան վարդապետը, Կիրակոս Գանձակեցին ու Սամվել Անեցին, ինչպես և ժամանակագիրներ, հիշատակագիրներ, իսկ այսօր արդեն դրոսաշրջիկները։ Ամերիկուհի գիտնականի կարծիքով, Անին տարբերվում է Հայաստանի ամրապատ մյուս բնակատեղերից ու առավելապես նման է Բյուզանդիայի նույնատիպ քաղաքներին։ Նա ենթադրում է, որ Սմբատ արքան այդ պարիսպները կառուցելիս հետևել է բյուզանդական վաղ շրջանի օրինակներին, սակայն ոչ Հայաստանում կիրառում գտած պաշտպանական համակարգին։ «Նախընտրելով այս ոչ հայկական ձևը, ասաց Ա. Թեյլորը,—Սմբատը ընդօրինակել է IV հարյուրամյակի Կոստանդնուպոլսի պարիսպները, ցանկանալով քրիստոնեության վեհագույն քաղաքի օրինակին հետևել»։ Հարգելի գիտնականը, սակայն, մոռանում է, որ 419—447 թթ. Թեոդոսիոս Բ-ի՝ Կոստանդնուպոլսում կառուցած պարիսպները ունեն քառանկյունի հատակագծով աշտարակներ, իսկ Անիինը բոլորաձև են։ Դրանք թվով 80 հատ են, որոնցից 55-ը՝ սմբատաշեն համարվող, տեղադրված են խիտ շարքով՝ 15—20 մ հեռավորությամբ ու կրկնակի են, ինչպես պատերը։ Նման որոշիչ պարագան, որն աչքի է ընկնում բարձրարժեք շինարարական նվաճումով, ճարտարապետական յուրահատուկ վերելքով, բյուզանդական շինարվեստի ծիրից դուրս է մնում։ Հայ վարպետները, յուրացնելով այլոց փորձը, Անիի տեղադրական պայմաններին, X—XI դդ. ռազմագիտական պահանջներին համապատասխան, ձևգտել են յուրովի լուծում տալ Անի մայրաքաղաքի պաշտպանական համակարգին։

Քաղաքաշինության տեսաբան ֆրանսուհի Սիլվիա Օստրովեցկին քաղաքի ամբողջական տեսքը որակավորում է որպես «քաղաքի ուրվանկար», այսինքն, քաղաքի պատկերը գերսից բնորոշող ճարտարապետաքաղաքաշինական ցայտուն հատկանիշ, որը ուրույն է և ունի Անին այլ քաղաքներից տարբերելու իմաստ, ինչպիսին ունեն Սան Ջիմինիանոն, Շարտրը, այսօր՝ Նյու Յորքը։ Ավելացնեմ, որ Անիի պարիսպների ուրվագիծն ունի քաղաքի պատկերը ձևականորեն տարբերակելու, բնութագրելու նույն նշանակությունը, ըստ էության՝ սեփական ոճը, որը մեզ թույլ է տալիս հատկանշել դարի արվեստը, կառույցը՝ պալատը, կաթողիկեն, քաղաքի հատվածները։ Այս իմաստով ևս, անհնար է Անիին բյուզանդական ոճ վերագրել, այն Բագրատունյաց շրջանի ոճով կառուցված քաղաք է։

Ճարտարապետ Ա. Զարյանը ելույթ ունեցավ «Ստորգետնյա Անին» թեմայով։ Նկատի ունենալով 1915—1917 թթ. Դ. Դիմիշիձեի և Ն. Տոկարսկու տեղում կատարած ուսումնասիրությունների արդյունքները, նա առաջարկեց Անին համարել երկհարկանի քաղաք՝ բաղկացած ստորգետնյա և վերգետնյա հարկերից։ Նա առաջարկեց հրաժարվել այն մտքից, թե վիմափոր Անին եղել է աղքատ մարդկանց և վանականների ապաստարան կամ պատերազմի ժամանակ օգտագործվել է որպես թշնամուց պատսպարող ժայռափոր վայր։ Նման մեկնաբանությունը հերքելու համար բավ է աչքի առաջ ունենալ Կապադովկիայի տասնյակ ստորգետնյա քաղաքները և դրանց պաշտպանական հնարավորությունները։

Անիում կատարված պեղումների արդյունքների համաձայն, քաղաքի երկու հարկերը՝ ժայռափոր ու վերևում կառուցված տարածությունները հաղորդակից են իրար, իսկ վիմափոր քաղաքը կազմել է վերևի քաղաքը սպասարկող հաստատություն՝ ինֆրաստրուկտուրան։ Երկու հարկերի միասնությունը իրագործվել է Բագրատունիների իշխանությունից սկսած։ Հրաբխային տուֆի զանգվածում փորված տարածությունների քանակը հասել է 1016 միավորի, այդ թվում՝ 500 սենյակ, 30 եկեղեցի, խմբավորված բնակարաններ՝ իրենց մատուռով, 16 աղավնատուն, որոնք ծառայել են որպես փոստակայաններ՝ քարավանների համար, շտեմարաններ, ջրի, գինու և ձեթի պահեստներ, քարավանատներ, վերգետնյա խանութ-արհեստանոցների ժայռափոր, ստորգետնյա պահեստներ, թունել-փողոցներ։ Թունելները Ախուրյանի վրա ձգված կամուրջների միջոցով հաղորդակցվում էին Բագրատունյաց մայրաքաղաքից բոլոր ուղղություններով ճյուղավորվող առևտրական մեծ ճանապարհներին։ 1913-ին Յ. Ստրժիգովսկին այցելեց ստորգետնյա Անի՝ ս. Առաքելոցի, Մայր տաճարի և ս. Փրկչի միջև գտնվող տարածության ստորգետնյա հարկը՝ ժայռափոր թունելներից և շուկայից բաղկացած համալիր, որն ավստրիացի բյուզանդագետը անվանում է «հրաշք գործ»։ Արժե հիշատակել, որ Եվրոպայում «քաղաքների վերածնության» շրջանում, գոյություն չի ունեցել երկհարկ քաղաք։ Այդ մասին, Վենետիկի օրինակից ներշնչված, մտածել էր Լեոնարդո դա Վինչին, առաջարկելով ջրանցքներ կառուցել ու, քաղաքի ապրանքատար տրանսպորտը անջատելով մարդկանց եր-

թեկությունից, կազմակերպել շրանցքների միջոցով։ Երկհարկ լեն նաև Հարավային Իտալիայի քաղաքներ Մատերան և Ագրիջենտոն։ Լեռների լանջերին փորված են հարյուրավոր խցեր՝ վանականների և ճգնավորների համար, իսկ լեռնագագաթներին կառուցված են քաղաքները՝ իրարից անջատ երկու հատվածներով։

Ա. Ալպագո-Նովելլոն զեկուցեց «Եվրոպայի կաթողիկեները և Անիի Մայր տաճարը» հարցի շուրջ, փորձելով դրանց միանշանակ դասակարգում կատարել։ Բազմաթիվ լուսանկարներ ցուցադրելով և ի մի բերելով ճարտարապետական բաղում շինություններ, նա հակված էր ապացուցելու, որ գոյություն ունի տարբեր երկրների եկեղեցական կառույցներից ստեղծված մի տեսակ՝ «եվրոպական միասնական տուն»։ Դասակարգելով այդ դարաշրջանի՝ հունական, բյուզանդական, իտալական եկեղեցիների տիպերը, ընդ որում նաև Անիի տրդատաշեն Մայր կաթողիկեն, զեկուցողը ընդհանրացրեց ոճական բոլոր տարբերությունները, էթնոսներին, մշակույթներին հատկանշող տարբեր հասկացություններն ու հանդեց դրանց ընդհանրական կողմերին։ Անվանի բյուզանդագետ Ֆ. Վ. Դայխմանը, քննության առնելով Ռ. Կրաութհայմերի «Վաղ քրիստոնեական և բյուզանդական ճարտարապետություն» հատորը (Նյու Յորք, 1965), որը մեծ հեղինակություն է վայելում ԱՄՆ-ում, իր «Հռոմ, Ռավեննա, Կոստանդնուպոլիս, Մերձավոր Արևելք» դրքում (Վիսբադեն, 1982), գրում է. «Անիի Մայր տաճարի խրձաձև մույթերը, դրանցից դեպի վեր ոլորվող կամարները, արտիճանավորում են ու սահմանում ներքին տարածությունը ու շենքի ծածկը։ Այն շինարարական կատարյալ կառուցվածք է, որի նմանը Եվրոպայում իրագործվելու էր ավելի ուշ, այն է՝ 150 տարի անց, իսկ ավելի վաղ շրջանում նման երևույթ գոյություն չուներ։ Հայ ճարտարապետության երկրորդ վերածննդին վերաբերող այս հրաշքը, թերևս, մնացել է չպարզաբանված երևույթ» (էջ 122)։

Պ. Տոնապետյանի խոսքը վերաբերում էր «Տրդատ ճարտարապետ» թեմային։ Նա նշել, որ Անիի կաթողիկեի և Արդինայի հեղինակը գլխավոր դեր ունեցավ Շիրակի ճարտարապետական դպրոցի կազմավորման գործում, նրա ստեղծագործությունները իրենց ազդեցությունը թողեցին եվրոպական ռոմանական ճարտարապետության վրա։ Տրդատը վերակառուցեց երկրաշարժից վնասված Կոստանդնուպոլսի Ա(յա Սոֆիայի գմբեթը, Անիում կառուցեց զվարթնոցատիպ Գագկաշեն ս. Գրիգոր Լուսավորիչը։ Պ. Տոնապետյանի տեսակետից հնարավոր չէ, որ Բագրատունյաց պալատի ճարտարապետ նշանակված մեծ վարպետը լիներ Հաղպատի ս. Նշան, Սանահնի Ամենափրկիչ, կամ Մարմաշենի և Հովվի եկեղեցիների հեղինակը։ Ստեղծագործությունների նման աբսոլյուտիզմը անհնար է, քանի որ գոյություն ունեին այլ վարպետներ ևս, որոնք, տեղական շինարարական դպրոցների ավանդների համաձայն, դարդացնում էին կենտրոնակազմ, գմբեթածածկ կառույցի տիպը։ Նշեմ որ, օրինակ, Հովվի փոքր եկեղեցին կառուցված է շիլերի և ծալքովի պատերի ու ծածկերի համակարգով, նորարարություն, որը՝ Տրդատի կառույցներից անկախ, թելադրում է ապագա դարգացման բոլորովին այլ հնարավորություններ։

Սրանք են այն կարևոր ելակետային մտքերը, որոնք քննության առարկա դարձան գիտաժողովի ժամանակ։ Փակման խոսքով հանդես եկավ Պ. Կունեոն։ Նա հանդիսատեսներին ցույց տվեց իր առաջարկած «հարգանքի գոտին» պատկերող գծագիրը, հանգամանորեն նշեց աշխարհագրական տվյալ տարածքում գտնվող հուշարձանները, դրանց այսօրվա վիճակը ու վերհիշելով կառույցների վերականգնմանը վերաբերող Վենետիկի և Տոլեդոյի շարտանեներում սահմանված օրենսդրությունը, եզրափակեց իր խոսքը, նշելով, որ «հարգանքի գոտիում» հարկ է ստեղծել կոթողների ուսումնասիրության և պահպանման միջազգային կենտրոն։ Վազգեն Բարսեղյանը նշեց, որ Անին ինչպես անցյալում, այնպես և այսօր կարող է նպաստել հարևան ժողովուրդների միջև փոխադարձ հասկացություն, հարգանք ու մերձեցում ստեղծելուն։ Այս է այն նպատակը, որ հետապնդում են ՅՈՒՆԵՍԿՈ-Ն, ԻԿՈՄՈՍ-ը, որոնք պետություններին արժեքների հանդեպ հարգանք, հոգատարություն են պարտավորեցնում, մի քաղաքականություն, որը համապատասխան է լինելու միջազգային իրավունքին։ Այս բարձրագույն նպատակին ձգտելու գործում իր նպաստը բերեց Նյու Յորքում տեղի ունեցած Անիի Մայր տաճարի հիմնադրման 1000-ամյակին նվիրված գիտական միջազգային համագումարը։

Ա. Կ. ՉԱՐՅԱՆ
Ճարտարապետ